

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ**

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:** Բնակչության դրամական եկամուտները 2002թ. հունվար-ապրիլին կազմել են 204017.7 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 209915.3 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2001թ. հունվար-ապրիլի համեմատ կազմել են, համապատասխանաբար՝ 103.5 և 101.7%: Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2002թ. հունվար-ապրիլին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 188019.0 մլն.դրամ (92.2%), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 10666.9 մլն.դրամ (5.2%): Ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունները նվազել են 4491.6 մլն.դրամով: Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2002թ. հունվար-ապրիլին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռն աճել է 4.7 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռը նվազել է 7.8 տոկոսային կետով:

**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:** Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2002թ. հունվար-ապրիլին 2001թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել են 1.5%-ով:

**Աշխատանքի վարձատրություն:** 2002թ. հունվար-ապրիլին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 24168 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 9.2%-ով: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալներով, կազմել է 15267 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատ՝ ավելացել 9.8%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար 32390 դրամ և աճել 12.0%-ով:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն՝ ըստ տնտեսության ճյուղերի 2002թ. մարտին**

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ով ընդամենի նկատմամբ		% -ով նախորդ տարվա նկատմամբ	
	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ
Ընդամենը	24788	23955	100	100	111.4	109.5
Արդյունաբերություն	38046	38051	153.5	158.8	111.6	118.4
Գյուղատնտեսություն	18688	18866	75.4	78.8	90.8	109.1
Անտառտնտեսություն	10890	11445	43.9	47.8	92.5	99.5
Տրանսպորտ	43971	41999	177.4	175.3	127.9	125.9
Կապ	54002	50110	217.9	209.2	122.3	118.6
Շինարարություն	42644	39253	172.0	163.9	112.3	101.2
Առևտուր, հանրային սնունդ	16684	13555	67.3	56.6	166.1	137.3
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	31225	28856	126.0	120.5	112.5	112.4
Հաշվողական տեղեկատ. սպասարկում	18750	18412	75.6	76.9	86.4	95.9
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	12513	12681	50.5	52.9	95.5	94.7
Կրթություն	14286	13087	57.6	54.6	116.1	103.3
Մշակույթ	11210	10992	45.2	45.9	117.4	111.0
Արվեստ	11727	12143	47.3	50.7	98.1	110.7
Գիտություն և գիտական սպասարկում	21674	19431	87.4	81.1	123.8	108.0
Վարկավորում և ապահովագրություն	76548	77070	308.8	321.7	102.4	108.7
Կառավարման ապարատ	36653	35391	147.9	147.7	116.7	108.9
Այլ	23960	23920	96.7	99.9	93.3	99.3

2002թ. մարտին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 45.2%-ից (մշակույթ) մինչև 57.6%-ի (կրթություն) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 3.1 անգամ, կապի համակարգում՝ 2.2 տրանսպորտում՝ 1.8, շինարարության մեջ՝ 1.7, արդյունաբերության մեջ և կառավարման համակարգում՝ 1.5 բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.3 անգամ: